Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 26-06-2023 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ Փ. 5
1.3 Պետական գրանցման համարը		222.160.916939
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-07-14
1.5 ՀՎՀՀ-ն		00156064
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60655885
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		vwfa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@vwfa.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Զարուհի Մուրադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	18	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում	812,904
	Կոլլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում	4,552,150
	Պրոդեքսպո 2022, Պրովայն 2022, Լոնդոն Ուայն ֆեյրս ցուցահանդեսներին մասնակցություն	51,553,519

	Քոնքըր Մոնդիալ դե Բրյուսել 2022 մրցույթի մասնակցություն	3,630,347
	Մոսկվայում կայանալիք ԱրմՈւայն միջոցառման կազմակերպում	9,933,112
	Մոսկվայում հայկական գինիների համտես_ շնորհանդեսների կազմակերպում, ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացում	2,676,000
	Հայկական գինի արտադրող ընկերությունների և Լյուդիգ Գրուփ Ռաշայի ներկայացուցիչների հետ B2B հանդիպման կազմակերպում	61,875
	Հայաստանի գինիներ հովանոցային ապրանքանիշի ստեղծում	1,946,000
	Եվրոպայում հայկական գինիների վաճառքի առցանց հարթակի, լոգիստիկ և հաճախորդների սպասարկման կենտրոնի գործունեության ապահովում	13,435,274
	Տեղական շուկայում գինու սպառման մշակույթի հանրայնացում	18,780,000
	Օ այ վի-ին ՀՀ անդամակցությունից բխող գործառույթների իրականացում	2,000,000
	Կանոնադրական նպատակների համար	126,602,360
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Դուալ համակարգերի ներդրում գինեգործական ընկերություններում	4,897,187
	Ուկրաինայի պետական պաշտոնյաների եւ ՓՄՁ-ների խաղողագործության եւ գինեգործության ոլորտում ճանաչողական այցի կազմակերպում	4,805,307
	Կանոնադրական նպատակների համար	13,700,000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		

11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը
Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում	812,904
Կոլլեկցիոն, ցուցադրական այգիների և տնկարանի պահպանում	4,552,150
Պրոդեքսպո 2022, Պրովայն 2022, Լոնդոն Ուայն ֆեյրս ցուցահանդեսներին մասնակցություն	51,553,519
Քոնքըր Մոնդիալ դե Բրյուսել 2022 մրցույթի մասնակցություն	3,630,347
Մոսկվայում կայանալիք ԱրմՈւայն միջոցառման կազմակերպում	9,933,112
Մոսկվայում հայկական գինիների համտես_ շնորհանդեսների կազմակերպում, ճանաչելիության բարձրացմանն ուղղված միջոցառումների անցկացում	2,676,600
Հայկական գինի արտադրող ընկերությունների և Լյուդիգ Գրուփ Ռաշայի ներկայացուցիչների հետ B2B հանդիպման կազմակերպում	61,875
Հայաստանի գինիներ հովանոցային ապրանքանիշի ստեղծում	1,946,000
Եվրոպայում հայկական գինիների վաճառքի առցանց հարթակի, լոգիստիկ և հաճախորդների սպասարկման կենտրոնի գործունեության ապահովում	13,435,274
Տեղական շուկայում գինու սպառման մշակույթի հանրայնացում	18,780,000
Օ այ վի-ին ՀՀ անդամակցությունից բխող գործառույթների իրականացում	2,000,000
Դուալ համակարգերի ներդրում գինեգործական ընկերություններում	5,592,096
Ուկրաինայի պետական պաշտոնյաների եւ ՓՄՁ-ների խաղողագործության եւ գինեգործության ոլորտում ճանաչողական այցի կազմակերպում	3,957,530
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	248,863,787
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	118,931,407

Digitally signed by SARGSYAN LILIT 521193
Date: 2023.06.30 13:41:34 AMT

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 6 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱՅ ԷՖ ՓԻ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 49/3, 7-րդ հարկ
E-mail: info@ifp.am
Հեռ. +(374) 11 96 77 77

"IFP" LLC
49/3 Komitas St., 7th floor., Yerevan, RA
E-mail: info@ifp.am
Tel. +(374) 11 96 77 77

Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2022թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի առ 31 դեկտեմբերի 2022թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ ՓՄԿ ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների:

Գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության

դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Հիմնադրամը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ

Հիմնադրամն այլևս չհամարվի անընդհատ գործող:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու աուդիտորն է՝

Ռոզա Հարությունյան

Ղեկավար աուդիտոր

«Այ Էֆ Փի» ՍՊԸ
Տնօրեն

Աշոտ Բարսեղյան
31 մայիս, 2023թ.

Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

		31.12.2022թ. հազ.դրամ	31.12.2021թ. հազ.դրամ
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	5,486	7,484
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**5,486**	**7,484**
Պաշար		630	789
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	971	2,117
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	41,682	41,991
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**43,283**	**44,897**
Ընդամենը ակտիվներ		**48,769**	**52,381**
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ (վնաս)		-	-
Ընդամենը զուտ ակտիվներ		-	-
Ակտիվներին վերաբերվող շնորհ	10	5,486	7,484
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**5,486**	**7,484**
Առնտրական և այլ կրեդիտորական պարտքեր		96	659
Ստացված կանխավճար		32	32
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	34,623	37,954
Արձակուրդային վճարների պահուստ		8,532	6,252
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**43,283**	**44,897**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**48,769**	**52,381**

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 28) հաստատվել են ղեկավարության կողմից 31.05.2023թ., ստորագրությամբ

Զարուհի Մուրադյան
Տնօրեն

Սոնա Մարկոսյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

	Ծան.	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Շնորհներից եկամուտ		260,014	345,048
Խաղողի վաճառքից եկամուտ		837	579
Իրականացված ծրագրեր	12	(119,789)	(199,070)
Կառավարման և վարչական այլ ծախսեր	13	(141,377)	(142,684)
Այլ ծախսեր		-	(4,647)
Ստացված տոկոսներ		389	862
Շահույթ(վնաս) հարկումից առաջ		**74**	**88**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	11	(74)	(88)
Ընդամենը համապարփակ ֆինանսական վնաս		-	-

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 28) հաստատվել են ղեկավարության կողմից 31.05.2023թ., ստորագրությամբ՝

Զարուհի Մուրադյան
Տնօրեն

Սոնա Մարկոսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	2022թ. հազ.դրամ	2021թ. հազ.դրամ
Գործառնական գործունեությունից հոսքեր		
Ստացված շնորհներ և նվիրատվություններ	259,080	347,111
Այլ մուտքեր	13,632	1,323
Ընթացիկ հաշվին հաշվեգրված տոկոս	389	333
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից	273,101	348,767
Ելքեր գործառնական գործունեությունից		
Ձեռքբերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց	(132,093)	(200,718)
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	(66,737)	(58,760)
Հարկերի վճարում	(57,195)	(72,433)
Սոցիալական ապահովագրության վճարներ	(3,999)	(3,274)
Այլ ելքեր	(9,913)	(7,078)
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից	(269,937)	(342,263)
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	3,164	6,504
Ներդրումային գործունեություն		
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից	-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից	-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից	-	
Հիմնական միջոցների ձեռքբերում	(938)	(2,438)
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից	(938)	(2,438)
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	(938)	(2,438)
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Ֆինանսական այլ գործունեությունից մուտք	-	-
Փոխառությունների (տրամադրում)/ մարում, զուտ	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր		
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	2,226	4,066
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(2,535)	(2,807)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	41,991	40,732
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	41,682	41,991

Ֆինանսական հաշվետվությունները և դրանց կից ծանոթագրությունները (էջ 7 - 28) հաստատվել են ղեկավարության կողմից 31.05.2023թ., ստորագրությամբ՝

Զարուհի Սուրադյան
Տնօրեն

Սոնա Մարկոսյան
Գլխավոր հաշվապահ

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2023 13:41